

ՄԻՏՔԸ ԵՎ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

- Ի՞նչ բան է հեռագայությունը
- Ուղեղից՝ ուղեղ
- Ռադիոկապ, թե՛ ինչ որ այլ բան
- Գաղտնիքը բացված չէ
- Հարկավոր է արդյոք հեռագայությունը ժամանակակից մարդուն

ՓԱՍՏԵՐԸ ՎԿԱՅՈՒՄ ԵՆ...

Չեիս ֆիզիոլոգ Ֆիզարը երկու մարդու տեղավորել է մի սենյակում, անջատել նրանց վարագույրով, յուրաքանչյուրի ձեռքին հագցրել մի սարք, որը նշում է արյունատար անոթների նեղացումը (ինչպես հայտնի է, լարված մտավոր աշխատանքի ժամանակ արյունատար անոթները նեղանում են)։ Փորձին մասնակցողներից մեկին առաջադրանք են տվել՝ բաղմապատկել երկու թիվ։ Նրա ձեռքին ամրացված սարքն իսկույն նշել է անոթների նեղացում։ Իսկ փոքր-ինչ ուշացումով նույն բանն է նշել նաև հարևանի ձեռքին ամրացված սարքը, թեև նա ոչ մի խնդիր չէր լուծել։

* * *

1927 թվականին կաղմակերպվել է անտեսանելի հեռագալական հաղորդում Փարիզից Նյու-Յորք։ Տասնհինգ պատկերից հինգը հաղորդվել է ճիշտ։ Հեռագալական կապի նույնպիսի փորձեր և նման արդյունքներով անց են կացվել Աթենքի և Փարիզի, Աթենքի և Վարշավայի միջև։

Այս երևույթին հաղար ու մի անուն են տվել՝ սկսած հեռագալությունից (տեղեկատվա) ու ֆենոմեն «սփս»-ից մինչև բիոէլեկտրոնիկան ու բիոլոգիական ռադիոկապը։ ԵՇՏ-ի 42-րդ հատորում այն անվանել են հակադիտական և իդեալիստական։ Բայց և այնպես ես այսօր գրում եմ այդ մասին։ Գրում եմ, որովհետև այդ երևույթն արժանի չէ արհամարհական մակդիրների։

Սակայն ի՞նչ բան է հեռագալությունը։ Դա հեռավորության վրա մեկ ուղեղից մյուսին զգայությունների, մտքերի և այլնի մասին տեղեկությունների փոխանցումն է (հաղորդումը), որ տեղի է ունենում դեռևս մեզ անհայտ ձևով։ Այդպիսի փոխանցման գոյություն մասին տարբեր ժամանակներում արտահայտվել են Բեխտերեն ու Բուտլերովը, դրա հնարավորությունն ընդունել են Պավլովն ու Մեչնիկովը, XIX դարի ֆրանսիացի խոշորագույն հոգեբան Շ. Ռիշեն և հոգեբանության, նեյրոֆիզիոլոգիայի ու տարբեր բնագավառի տասնյակ այլ հեղինակություններ։

Այժմ այդ բնագավառում աշխատում են բազմաթիվ գիտնականներ։ Մեր երկրում հեռագալության հետազոտման ասպարեզում առանձնապես մեծ ներդրում է կատարել Բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Լ. Լ. Վասիլևը, որը մի հատուկ լաբորատորիա է զբաղվում էնեֆի-գրադի համալսարանում։

Արդեն հրապարակված են հաղարավոր հոգվածներ և տասնյակ գրքեր, որտեղ թվարկվում են մի շարք հաստատագրված փաստեր, և փորձեր են արվում բացատրել դրանք։ Չնայած այս բոլորին, գիտնականներից շատերը լսել անգամ չեն ցանկանում հեռագալության մասին։ Ինչո՞ւ։ Անշուշտ այն պատճառով, որ մարդկությունը ոչ մի կերպ չի կարողանում ներել իրեն՝ անցյալի դյուրահավատության համար։ Մի ժամանակ մարդիկ հավատում էին հոգիների տեղափոխությանը, կախարհությանը, ոգիների հետ խոսելու հնարավորությանը։ Բայց հիմա մարդկության գիտուն ներկայացուցիչներին նույնիսկ վաղեմի «յոթ անգամ չափիր...» նվիրական կանոնը չափազանց մեղմ է թվում, մանավանդ, եթե

խոսքը վերաբերում է «կասկածելի համբավ» ունեցող պոր-
լաններին: Իսկ հեռագրալուծյան համբավը, ինչ խոսք, չափա-
զանց լուրջ կերպով արատավորվել է իդեալիստների կողմից,
որոնք դրան սոսկ միստիկական բացատրություն են տալիս:

Սակայն մարդկությունն արդեն առիթ է ունեցել չափա-
զանց երկար ժամանակ չհավատալ այնպիսի փաստերի, որոնք
այսօր անհերքելի են: Մտաբերներ թեկուզ հիպնոտիզմը, որով
ներկայումս բուժում են կատարում: Կամ այս դեպքը... Երբ
ամերիկացի խոշորագույն գիտնական Ռոբերտ Վուդը ներկա
է եղել Ատլանտյան օվկիանոսի վրայով ուղարկած առաջին
ռադիոազդանշանների ընդունմանը, այնքան էլ չի հավատա-
ցել տեղի ունեցող երևույթի իսկությունը և հեղանքով նկատել
է, թե այդ հնչյունները կարելի էր ստանալ շատ ավելի հասա-
րակ եղանակով:

Մեզ շրջապատող աշխարհում կան երևույթներ, որոնց մա-
սին մենք առայժմ քիչ բան գիտենք, շատ երևույթներ էլ դեռևս
վերջնականապես չեն բացատրվել՝ սկսած զրափխտացիոն
ալիքներից մինչև գնդաձև կայծակի առաջացման պատճառ-
ները: Բայց մի՞թե դա իրավունք է տալիս հերքելու գնդաձև
կայծակի գոյությունը:

● Իսկ ինչպե՞ս է տեղի ունենում մտքերի հաղորդումն ու
ընդունումը: Ի՞նչն է կապում լեռներով ու ծովերով իրարից
անջատված երկու ուղեղները:

Իհարկե, ինքնին ծագում է մի պատասխան՝ ռադիոալիք-
ները: Ռադիոալիքների օգտին են խոսում բազմաթիվ հանգա-
մանքներ. և՛ այն, որ մեր մարմնի հյուսվածքներից շատերն
իրենց շուրջն ստեղծում են էլեկտրամագնիսական դաշտեր, և՛
որոշ նյարդերի կառուցվածքը, որ շատ բանով հիշեցնում է
ռադիոտեխնիկայում օգտագործվող տատանողական կոնտուր-
ները: Հեռագրալուծյան հայտնի հետազոտողներից մեկի՝
Բ. Բ. Կաթինսկու վերջին գիրքը հենց այդպես էլ կոչվում է՝
«Բիոլոգիական ռադիոկապ»:

Սակայն քիչ չեն նաև «հակառակ» փաստարկները: Այդ
փաստարկներից շատերն ինքը՝ ռադիոտեխնիկան է բերում:
Ահա դրանցից մեկը. հեռագրալուծական ազդանշանների խոր-
հրդավոր կրողները շատ փորձերում կանգ չէին առնում այն-
պիսի խոշորոտների առջև, ինչպիսիք են մետաղյա էկրան-
ները և նույնիսկ ջրի հաստ շերտը: Բայց հայտնի լե՛հ ռադիո-
տեխնիկ պրոֆեսոր Ստեֆան Մանշարսկին տալիս է դրա
բացատրությունը: Բավական է պատկերացնել, ասում է նա,
որ ուղեղը ռադիոհաղորդում է վարում համախաղանության
շատ լայն դիապազոնում միաժամանակ: Ամեն խոշորոտ ար-
գելք է հանդիսանում որոշակիորեն այս կամ այն երկարու-
թյան ալիքի համար միայն: Մի քանի կիլոմետր երկարության
ալիքների համար, ինչպես ցույց են տվել վերջին տարիների
աշխատանքները, թափանցելի է նույնիսկ ջուրը:

Այլ տեսակետի վրա է կանգնած «կիբեռնետիկայի հայր»
Նորբերտ Վինբեր:

Նա գտնում է, որ եթե մարդուն դիտենք որպես ռացիա,
այսպես նա իբրև անտենա կարող է օգտագործել միայն իր սե-
փական մարմինը: Նշանակում է, կարելի է խոսել միայն հա-
մեմատաբար կարճ՝ վայրկյանում միլիոնավոր տատանումներ
ունեցող ալիքների մասին: Բայց անգամ այսպիսի տեսական
դրույթները միշտ չէ, որ հաջողություն են ունենում:

ՓԱՍՏԵՐԸ ՎԿԱՅՈՒՄ ԵՆ...

Այն փորձերում, երբ մեկը նայում է
առարկային, իսկ մյուսը գուշակում է
այդ առարկան, հաջող գուշակման տո-
կոսը բարձրանում է, երբ կիրառվում
են այնպիսի բժշկական միջոցներ, ո-
րոնք զրգուտ են գլխուղեղի մեծ կի-
սագնդերի կեղևը:

*
*

1958 թվականին մի հեռագրաց մեկ-
նում է ԱՄՆ-ի «Նաութիլուս» սուզանա-
վով: Երկրորդը մնում է ծովափին: Բա-
ժանված լինելով «հաղորդողից» նավի
զրահով և ջրի հաստ շերտով, նա կարո-
ղացել է գուշակել այն հատուկ խաղա-
թղթերի 70 տոկոսը, որոնց վրա նայել
էր առաջինը: Խաղաթուղթները խու-
սափելու համար խաղաթղթերը խառն-
վել են և դուրս նետվել ավտոմատի մի-
ջոցով:

Բնութիւնը սիրում է բմահանորեն վարվել տեսութիւնների հետ: Զէ՞ որ ամենասովորական կայծակը ինչ-որ իմաստով տեսականորեն անհնարին է: Ճշգրիտ հաշվարկները ցույց են տվել, որ կայծակի առաջացման համար ամպերում պետք է լինի 7—10 հազար վոլտ լարվածութիւն՝ մեկ սանտիմետրում: Ինչպես երևում է, «շիմանալով» այդ բանը, կայծակն այնուամենայնիվ առաջանում է, թեև ամպերում լարվածութիւնը «խղճուկ» երկու հազար վոլտից չի անցնում:

Իսկ եթե դրանք ռադիոալիքներ չե՞ն: Հապա ո՞ր ալիքներն են, որոնց չեն կարողանում կանգնեցնել ոչ ջութերը, ոչ էլ պողպատը: Ժամանակակից գիտութիւնը կարող է առաջարկել մի բանի թեկնածուներ:

Օրինակ՝ նեյտրինո մասնիկները: Սրանք շարժվում են լույսի արագութեամբ և թափանցում-անցնում են անգամ մեր մոլորակի միջով: Ֆիզիկոսների ենթադրութիւնների համաձայն, նեյտրինոները կազմում են Տիեզերքի մատերիայի շափաղանց զգալի մասը (մոտավորապես մեկ երրորդը): Ամեն վայրկյան մենք ենթարկվում ենք նրանց ուժեղածուծութեանը: Միդուցե (իհարկե դա զեռես ֆանտաստիկ բնույթի հիպոթեզ է) էվոլյուցիան իր ժամանակին լուծել է նեյտրինոները որպես տեղեկութիւնների հաղորդիչներ օգտագործելու խնդիրը:

Այդ դերի համար մյուս հավակնորդը գրավիտացիոն ալիքներն են՝ գրավիտոնները: Այդպիսի ալիքներ է ուղարկում ամեն մի շարժվող մարմին՝ սկսած աստղերից մինչև էլեկտրոնը: Այս իմաստով հօգուտ գրավիտացիոն ալիքների են արտահայտվել, մասնավորապես, ֆիզիկայի բնագավառում մեծ հեղինակութիւն վայելող մարդիկ՝ Նորելյան մրցանակի լաուրէատ Պ. Իորդանը և էյնշտայնի նախկին աշխատակից Բ. Հոֆմանը:

XX դարում բնութիւնը ստիպել է գիտնականներին հրաժարվելու իրենց ամենագետ համարելուց: Զէ՞ որ նեյտրինոներն ու գրավիտոններն իսկ, եթե նրանց հասակը հայտնագործման պահից հաշվելու լինենք, ընդամենը մի բանի տասնյակ տարեկան են: Ո՞վ կարող է երաշխավորել, որ հենց այս տարի մենք չենք լսի այնպիսի նոր մասնիկների ու ալիքների մասին, որոնք գուցե և կլինեն հետագայութեան բանալին:

Եթե մինչև այժմ չենք կարողանում պատասխանել այն հարցին, թե ինչ բան է ֆենոմեն «փսի»-ն, միդուցե արժե որոնումներ կատարել մի ա՞յլ ճանապարհով. լուծել այն խնդիրը, թե կենդանի մարդու օրգանիզմում խորհրդավոր ալիքների բնկալման պատասխանատուն ի՞նչն է: Սա կարծես ավելի հեշտ է. ամեն մի բժշկական ինստիտուտում կան բազմաթիվ

ՓԱՍՏԵՐԸ ՎԿԱՅՈՒՄ ԵՆ...

Ս. Մ. Գենոսովան 1943 թվականի մարտին երազում տեսնում է, թե իբր ամուսնուց ստացել է այսպիսի մի հեռագիր. «Այսօր մեկնում եմ Սվերդլովսկ գնում եմ ռազմաճակատ համրուրում եմ Ֆուրի»:

Նա անմիջապես մեկնում է Սվերդլովսկ և այնտեղ հանդիպում ամուսնուն, որն իրոք, ցանկացել է ուղարկել այդպիսի հեռագիր, բայց չի ուղարկել, վախենալով, որ այն ժամանակին չի հասնի տուն:

* * *

Ֆրանսիացի բժիշկ Փեանը գիտական ամսագրում գրել է, թե ինչպես յոթ տարեկան մի տղա հանկարծ սկսել է ճչալ ու օգնութիւն կանչել, պնդելով, որ հայրը խեղդվում է: Վերջիվերջո տղան հանգստանում է, բայց շարունակում է պնդել, որ իր հայրը խեղդվեց, և որ ինքը տեսավ այդ: Իսկ այդ ժամանակ հայրը գտնվելիս է եղել նիցցայում: Հետո հեռագիր է ստացվում նրա խեղդվելու մասին, որ տեղի է ունեցել ճիշտ այն պահին, երբ տղայի մոտ հալուցինացիա է սկսվել:



«Բ»-ով նշանակված են այն նկարները, որոնք զոկտոր Բրուլը մտովին ետքնել է իր

մակետներ, որոնց վրա ներկայացված է մարդու ամբողջ օրգանիզմը:

Ամբողջ: Ինչպե՞ս չէ: Մինչև վերջին տարիներս էլ շենդադարում գեղձերի և մյուս օրգանների նորանոր մասերի հայտնագործումները: Բոլորովին վերջերս կորեացի գիտնականները ավալին, արյունատար և նյարդային համակարգություններից բացի, օրգանիզմում հայտնաբերել են ֆիզիոլոգիական մի նոր համակարգություն: Եթե դեռևս կարելի է անել այդ մասշտաբի հայտնագործություններ, ապա մի նոր զգայարանի համար էլ, անշուշտ, տեղ կգտնվի:

Ամենից առաջ մենք դեռևս շատ քիչ բան գիտենք մաշկի՝ իբրև զգայարանի հատկությունների մասին: Մաշկը մեզ հնարավորություն է տալիս օգտվելու շոշափելիքից, որոշելու տա՞ք, թե սառն են առարկաները: Բայց, ինչպես ենթադրում են գիտնականներից շատերը, մաշկի մեջ մտնող նյարդային վերջավորություններն այնքան բազմազան են, որ հազիվ թե միայն այդ ֆունկցիան են կատարում: Եվ իրոք, գիտնականները փորձերի միջոցով կարողացել են «վարժեցնել» ձեռքի մաշկին՝ զգալու լույսը (նույնիսկ տարբերել կարմիր գույնը կանաչից): Դրա համար վարժեցման պրոցեսում ձեռքի վրա լույսի ներգործությունն ուղեկցվել է էլեկտրական հոսանքի հարվածներով: Վերջիվերջո մշակվել է համապատասխան պայմանական ռեֆլեքս: Նույն եղանակով, մարդու մաշկը «վարժվել» է զգալու ցածր հաճախականության էլեկտրամագնիսական դաշտի ներգործությունը:

Կամ վերցնենք հոտառությունը: Սա բոլորիս հայտնի զգայարաններից ամենաքիչ ուսումնասիրվածն է, իսկ քիթը՝ մարդու ամենաքիչ ուսումնասիրված օրգանն է: Հոտառության մասին եղած տեսությունները (իսկ դրանք բավականին շատ են) հակասում են միմյանց: Ի դեպ, դրանցից մեկը պնդում է, որ քիթի մեջ գտնվող հոտառության հատուկ մազիկները 8—14 միկրոն երկարության էլեկտրամագնիսական ալիքների գեներատորներ են հանդիսանում: Մի այլ տեսություն քիթի բջիջներին վերագրում է միայն այնպիսի ալիքների ընդունիչների դեր, որոնք արձակվում են հոտ ունեցող նյութերի կողմից:


Առհասարակ քիթի կառուցվածքը կարող է չափազանց բարդ լիլալ, եթե նրա խնդիրը միայն հոտառությունն է: Որոշ տվյալների համաձայն հոտառության բջիջները բաժանվում են 24 տիպի, և դրա շնորհիվ մարդը պետք է որ ընդունակ լինի ընկալելու 16 միլիոն տարբեր հոտեր: Իսկ մենք սովորաբար գործ ենք ունենում ամենաշատը հազարների հետ: Այդ դեպքում ինչի՞ համար է այս առատությունը: Մի՞թե կասկածելի չէ:

ՓԱՍՏԵՐԸ ՎԿԱՅՈՒՄ ԵՆ...

1922 թվականի նոյեմբերի 18-ին Բ. Բ. Կաթինսկին խնդրում է հայտնի մարդիկ Վ. Լ. Դուրովին մտքում ներշնչել իրեն կատարելու որևէ շարժումային ռեֆլեքս: Դուրովն արագորեն մի բան է գրում թղթի վրա և սկսում ուշադրությամբ նայել Կաթինսկու դեմքին: Նա առանձնապես ոշինչ չի զգում, միայն թե հանկարծ աչ ձեռքի մատը տանում է դեպի ականջի ետևը և կպցնում գլխի մաշկին: Դուրովը նրան է մեկնում թուղթը, որտեղ գրված է լի-նում՝ «Քորիք աչ ականջիդ ետևը»:

• • •

200-ից մինչև մի քանի հազար մեգահերց դիապազոնի իմպուլսային ռադիոալիքների ճառագայթման դաշտում մարդիկ զգոց են զգում: Այն լսում են նույնիսկ խուլները: Այդ բանն իր աշխատանքներում ցույց է տվել դոկտոր Ֆրեցը ԱՄՆ-ում: Նշանակում է, մարդիկ ընդունակ են անմիջականորեն ընկալելու ռադիոալիքները:



պացիենտներին, իսկ «ա»-ով և «գ»-ով՝ այն նկարները, որոնք վերաբրտադրել են նրանք նույն փորձի ժամանակ:

ՄԹՆՈՒՆՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ ԼՃԻ

I - 550 մլն մ³

II - 420 մլն մ³

Գ Ո Ւ Ն Ո Ր Շ Ի Ս
I - 1210 մլն մ³ II - 950 մլն մ³

1416 Կմ²

58.5 մլն մ³

1300 Կմ²

250 Կմ²
մլն մ³

Ֆիլիսթալ 60 մլն մ³
I - 50 մլն մ³
II - 500 մլն մ³
III - 550 մլն մ³

ԶԻՆՈՒՄ ԳԵՏ ԶՈՒՐ
ԶԻՆՈՒՄ ԳԵՏ ԶՈՒՐ
ԶԻՆՈՒՄ ԳԵՏ ԶՈՒՐ
ԶԻՆՈՒՄ ԳԵՏ ԶՈՒՐ

I - ջր

II - ջր

III - ջր


ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՐԹԱՎԱՅՐ
120 ՀԱՋ. ՀԱ ՈՌՈԳՈՒՄ - 400 մլն մ³ ՋՈՒՐ

ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ - ԿՐԱ

III-100 ՄԼ Մ³

Անվանի ավազանի 28 գետերի հոսքը
 I-770 ՄԼ Մ³
 II-730 ՄԼ Մ³
 III-810 ՄԼ Մ³

Տ Ո Ւ Մ
 III-210 ՄԼ Մ³



Լճի շրջանում մասի 118 ՀԱԶ ՀԱ ՈՌՈԳՈՒՄ

ԵՎԱՆԱ ԼՃԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԽԵՄԱՆ

ԿՐԼԿԱՆԻՉՆԵՐԸ՝

- ի բնական մակարդակի դեպքում
- ի մակարդակը 20 մ իջեցնելու դեպքում
- ի մակարդակը 50 մ իջեցնելու դեպքում

Մենք սովոր ենք, որ մեր զգայարանները տեղավորված լինեն մարմնի վրա: Եվ դա հասկանալի է, որովհետև աչքը պետք է տեսնի, ականջը՝ լսի, իսկ ամեն մի խոշորագույն կիսանգարի դրան: Բայց, «ուղեղի ալիքները», ըստ երևույթին, բաց ճանապարհի կարիքը չեն զգում: Նշանակում է, նրանց օրգանը կարող է գտնվել մարդու ներսում և թաքնված լինել որքան ասես խոր:

Բ. Բ. Կաթինսկին այդ կապակցությամբ հատուկ ուշադրություն է դարձրել էպիֆիզին՝ այն փոքրիկ գեղձին, որ գտնվում է ուղեղի տեսողության թմբիկների շրջանում: Օրգանիզմում էպիֆիզի կատարած ֆունկցիաները քիչ են լուսաբանված: Փորձել են էպիֆիզը կապել ժամանակակից կենդանիների ու մարդու մոտ արդեն անհետացած, բայց նրանց նախնիների՝ թևավորված կաթնասունների մոտ (զագագիին) եղած երրորդ աչքի հետ: Միգուցե երրորդ աչքի վերանալու պատճառով էպիֆիզը դարձել է մի զգայարան, որն ընդունում է միտք՝ հեռավորության վրա:

Իսկ դեռ որքան շատ հանելուկներ ու գաղտնիքներ կարող են թաքնված լինել մարդու ուղեղում և ընդհանրապես ամբողջ օրգանիզմում:

Շ Ներկայումս հեռազգայության կապի նույնիսկ պատահական դեպքերն էլ հազարից հազիվ մեկ մարդու մոտ են հանդիպում: Դա, որպես կանոն, երևան է գալիս մտերիմների միջև: Փոխանցվում են ոչ թե բառեր, այլ տեսանելի պատկերներ և հույզեր: Հաղորդումներն ավելի հաջող են ստացվում, երբ մարդը քնած է, կամ կիսանիդուն է: Գիտնականները, մասնավորապես Լ. Լ. Վասիլևը, ենթադրում են, որ հաղորդման համար պատասխանատու են ուղեղի այն բաժինները, որոնք տեղավորված են մեծ կիսագնդերի կեղևի տակ: Հենց այդ պատճառով էլ հեռազգայական հաղորդման համար նպաստավոր է, երբ կեղևը, թեկուզև մասնակիորեն, բայց դադարում է գործել:

Այժմ հեռազգայությունը մարդկանց համար, ըստ երևույթին, նշանակություն չունի: Բայց դա ի՞նչ է՝ անցյալում եղած ընդունակության ինչ-որ մնացուկ, թե մի սաղմ, որը մեծ հեռակարներ է բացում հեռազգայության առջև: Երկու տեսակետներն էլ ունեն իրենց կողմնակիցները: Լ. Լ. Վասիլևը հեռազգայության ընդունակությունը համարում է մնացուկ այն ժամանակներից, երբ երկրի վրա մարդկանց բնակավայրերը շատ նոսր են եղել, և հեռավոր կապի մեծ կարիք է զգացվել: Եվ պատահական չէ, որ հեռազգայությամբ ամենից առաջ հաղորդվում են մերձավոր մարդուն սպառնացող մահվան և վտանգի պատկերներ: Արդոյք օգնության կանչ չէ՞ այդ:

Ոչ բոլոր գիտնականներն են համաձայն Լ. Լ. Վասիլևի հետ: Մարդն օժտված է բազմաթիվ թաքնված ընդունակություններով, որոնք կարող են իրացվել բարենպաստ պայմաններում: Շատ հնարավոր է, որ հեռազգայությունը դրանց թվին է պատկանում: Եվ գուցե մեզ միայն թվում է, թե մարդկությունը օժտված չէ հեռազգայական ընդունակություններով: Դուրս բանն այն չէ, որ մարդկանց մեծամասնությունը զուրկ է խորհրդավոր հեռազգայական կապ հաստատելու ընդունակությունից, այլ այն, որ նրանց մտքով չի էլ անցնում, թե ունեն այդ ընդունակությունը և չեն կարողանում օգտագործել:

ՓԱՍՏԵՐԸ ՎԱՅՈՒՄ ԵՆ...

Ֆրանսիացի ֆարմակոլոգ Ռույնեն ինժեներ S-ին խմեցնում է մեքսիկական պեյոտլ կակտուսի հյութ: Դրանից հետո նրան մոտովին ներշնչում է Դանթեի կիսանդրու, ապա գալլի և այլ առարկաների տեսողական պատկերներ: Ամեն անգամ մոտավորապես երեք րոպեից հետո ինժեները տվել է այն առարկայի անունը, որ նրան ներշնչել են:

* *

1934 թվականին սովետական բժիշկ Դուբրովսկին, որ գտնվում էր Սևաստոպոլում, քնեցնում է Լենինգրադում ապրող իր պացիենտուհուն: Փորձերն արձանագրվում էին: Մի օր, երբ Դուբրովսկին հիվանդանում է, ենթադրվող քնեցումը տեղի չի ունենում: Դա բացառում է պայմանական ռեֆլեքսի ազդեցությունը:

այն: նամակ գրելու համար հարկավոր է գրագետ լինել: Գուցե, չնչին բացառությամբ, մարդկությունը հեռագրագործն անգրագետ է: Չէ որ մի ժամանակ մարդկանց հիպնոզելու ընդունակությունը նույնպես վերագրվում էր առանձին անհատներին: Հիմա դա սովորեցնում են ինստիտուտներում:

Այն մասին, որ այս ենթադրությունը հեռագրագրության առումով անապացուցելի չէ, վկայում են մի շարք փաստեր: Մի խոսքով, եթե նույնիսկ մարդու հեռագրայական հնարավորությունները վերջին հաղարամյակների ընթացքում նվազել են, ապա մարդն ինքն ընդունակ է վերագրաձնելու նրանց անցյալի ուժն ու նշանակությունը: Եթե մենք «ուղեղային ուղիով» կարիքն զգանք, ապա կարելի կլինի նրանից օգտվել: Իսկ իզգացվի՞ արդյոք նրա կարիքը: Այստեղ շատ բան, նույնիսկ ամեն ինչ, կախված է հեռագրայական ալիքների բնությունից:

Իսկապես, որքան լավ կլինե՞ր՝ առանց որևէ սարքի հաղարավոր կիրմետոր հեռավորության վրա զրուցել բարեկամի կամ սիրած կնոջ հետ...

Բայց նախ՝ դժվար թե դա զրույց լինի, չէ որ հաղորդվում են ոչ թե բառեր, այլ միայն մտապատկերներ: Եվ երկրորդ՝ հեռավորության վրա զրույց կարելի է կազմակերպել նաև այլ կերպ: Արդեն հիմա տեխնիկապես հնարավոր է երկրի յուրաքանչյուր բնակչի ապահովել գրպանի ուղիով հեռախոսով: Ի՞նչ առավելություններ կարող է ունենալ «ուղեղային ուղիով» (եթե դա ուղիով է) ոչ ուղեղային ուղիով հանդես: Անշուշտ ո՛չ մի:

Իսկ միայն այն միտքը, թե՛ լավ կլինե՞ր, որ մարդ օժտված լինե՞ր «ուղեղային ուղիով» դեռ բավական չէ ասելու, որ դա անհրաժեշտություն է: Վերնաշխատ բանվորներից շատերն են երևի այն բաշել դժվար բույսերին, մտածելով, թե որքան հեշտ է կապիկի համար՝ նա պուշ ունի... Բայց ոչ-ոք չի ափսոսա, որ մարդը պուշ չունի և միջոցներ չի որոնի նորից պուշ աճեցնելու համար:

Այլ, բոլորովին այլ բան է, եթե «ուղեղային ուղիով» անվանումը սոսկ պայմանական է, և ուղեղի ալիքները ուղիով ալիքներ չեն:

Այդ դեպքում տեխնիկան այսօր դիչում է (գոնե՛ս առայժմ) բնությունը, և հեռագրայական ընդունակությունների կիրառման համար լայն հնարավորություններ են ստեղծվում:

Ամենից առաջ այն կարող է փոխարինել ուղիովկապին, որն այնքան հեշտությամբ ընդհատվում է մագնիսական փոփոքիկների կողմից:

Այսօր հիմնականում երկու զգայություններ՝ յուղությունը և տեսողությունն են ապահովում մարդկանց միջև ինֆորմացիայի փոխանակումը:

Այդ զգայարանները մենք պատրաստի վիճակում ստացել ենք բնությունից: Եթե դրանց լրջորեն միանա նաև հեռագրայական կապը, ապա դա կլինի հենց իրենց՝ մարդկանց վաստակը:



Ամերիկյան գրող Էյստոն Սինկլերն իր կնոջ՝ Մերիի հետ պրպովում էր հեռագրայական դիտումներով: Վերևի նկարում Սինկլերի կողմից ներշնչված մտապատկերն է, ներքևում այն պատկերը, որն ընկալել է Մերին:

ՓԱՍՏԵՐԸ ՎԿԱՅՈՒՄ ԵՆ...

Հեռագրայական դիտումներով զբաղվել են ամերիկացի գրող Էյստոն Սինկլերն ու նրա կինը՝ Մերին:

Ամուսնությունից կարճ ժամանակ հետո ավտոմոբիլով շրջագայելիս Մերին զգում է, որ իրենց տուն մտավ ոմն Բ, որ առաջ երբեք իրենց տանը չի եղել և ապրել է իրենցից հեռու մի տեղում. «Զգացողությունը» ճիշտ էր եղել: Այդ ժամանակ Բ-ն իսկապես գտնվել էր Սինկլերների տանը:

Մի անգամ Մերին ուժեղ տագնապ է զգացել: Նրան անհանգստացրել է Էյստոնի մտերիմ բարեկամ Զեկ Լոնգոնի վիճակը: Հենց այդ ժամանակ Լոնգոնն ինքնասպանություն է գործել: